ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵՔ-ԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Հախվերդյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Իգիթյան, Ա. Սարգսյան, Ա. Կիրակոսյան, Կ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

1. Հայտերի բացման մասին և գնահատման մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հունվարի 17-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերին էլեկտրոնային համակարգով /www.armeps.am/ առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
2	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ
3	«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ
4	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեք	Առաջարկած գինը		
			Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	273600000	182400000	---------	182400000
2	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ		167280000	---------	167280000
3	«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ		146400000	---------	146400000
4	«Ռոսգոսստրախ-		205440000	---------	205440000

	Արմենիա» ԱՓԲԸ				

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են.

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.3 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի, որի կողմից ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերի 7.4 կետով սահմանված պահանջին՝ համաձայն որի հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր...., իսկ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից 17.01.2019 թվականին N 85/10/5 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից տրված ԵՐԱՇԽԻՔ N 19-0001 4-րդ կետով, երեշխիքի գործողության ժամկետ է սահմանված 2019 թվականի ապրիլի 16-ը ներառյալ, որը պակաս է հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օրից:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.4 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից խախտվել է գնման ընթացակարգի հրավերի 7.4 կետի պահանջը, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով որոշեց մերժել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը.

2.4 Գնահատող հանձնաժողովը օրենսդրական պահանջների համաձայն որոշեց՝

Հ/Հ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել			2-րդ տեղ զբաղեցրած մասնակից	3-րդ տեղ զբաղեցրած մասնակից
	Մասնակցի անուն	Պայմ. գին	ԱԱՀ		
1	«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	146400000	-	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ

2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Դ. Հախվերդյան
Անդամներ՝		Տ. Իգիթյան
		Ա. Սարգսյան
		Ա. Կիրակոսյան
		Կ. Հարությունյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան